«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/02»

ք. Երևան «27» 12 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քինգ Մարշալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Դավիդ Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման

իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 39 800 400 (երեսունինը միլիոն ութ հարյուր հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում մեկ ամսվա Ծառայության մատուցման գինը 1-ին չափաբաժնի մասով կազմում է 1 067 000 (մեկ միլիոն վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 2 249 700 (երկու միլիոն երկու հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետներից որևէ մեկը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել

այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե Պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և Պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով (Չափաբաժին N 2-ի դեպքում)՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և Պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Քինգ Մարշալ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ՀՀ, ք.Մասիս, Կենտրոնական
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	հրապարակ թիվ 15/5,15/3
Հ/Հ 1150001172630300	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ Մասիս մ/ճ
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 220163331493000
Գլխավոր տնօրեն	ՀՎՀՀ 00191157
	Տնօրեն
---------- Հ. Հարությունյան	---------- Դ.Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» 12. 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀՇՁԲ-22/02» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Անվտանգության և պահնորդային ծառայություններ

Ծառայության								
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը
1	75241100/503	Անվտանգության և պահնորդային ծառայություններ	***Վարչական շենք թիվ 1*** 1 մուտք 1365 մ²-1x 24 ժամյա և աշխատանքային օրերին ավելացված 1x8 ժամյա անցագրային կետի հերթապահություն ***Վարչական շենք թիվ 2*** 2 մուտք 504 մ²- 24 ժամյա ա/Ավտոտրանսպորտային միջոցների անցակետ 1x 24 ժամյա բ/ 1 մուտք 1x 24 ժամյա գ/ Ավտոտնակներ 51 հատ 1473 մ² - շրջայց դ/ ԲԷՑ ՓԲԸ գլխամասային վարչական տարածքի ընդհանուր մակերեսը 5000մ² – շրջայց:	դրամ	12804000	1	Ք. Երևան Զորավար Անդրանիկի 1	Ծառայությունների մատուցումը կիրակա նացվի ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայ նագրի հիման վրա՝ 01.01.2022-31.12.2022թթ.
2	75241100/504	Անվտանգության և պահնորդային ծառայություններ	**«Շահումյան 2» ենթակայան** ա/ արտադրատնտեսական շենքեր և շինություններ, թվով 2 մուտք բ/ ընդհանուր մակերեսը՝ 5,0318 /հա/ գ/ շենք -շինությունների ընդհանուր մակերեսը՝ 1149,3 մ² Ծառայության տևողությունը՝ շուրջօրյա 1x 24 ժամ և 1 x 14 ժամ / ժամը 19:00-9:00/ հերթապահություն **«Զովունի» ենթակայան** ա/ արտադրատնտեսական շենքեր և շինություններ, թվով 1 մուտք, բ/ ընդհանուր մակերեսը՝ 3,154 /հա/ գ/ շենք- շինությունների ընդհանուր մակերեսը՝ 1108,1 մ² Ծառայության տևողությունը՝	դրամ	26996400	1	Շահումյան ենթակայան հասցեն՝ ք. Երևան Տիչինայի 207 Զովունի ենթակայան հասցեն՝ ք. Երևան Դավիթաշեն 4-րդ թաղ. Եղվարդի խճուղի 22/3	Ծառայությունների մատուցումը կիրակա նացվի ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայ նագրի հիման վրա՝ 01.01.2022 31.12.2022թթ.

			շուրջօրյա /1x 24 ժամյա/ հերթապահություն **«Հաղթանակ » 220 կՎ ենթակայան** ա/ արտադրատնտեսական շենքեր և շինություններ, թվով 1 մուտք, բ/ ընդհանուր մակերեսը՝ 2,7559 /հա/ գ/ շենք- շինությունների ընդհանուր մակերեսը 981,3 մ² Ծառայության տևողությունը՝ շուրջօրյա /1x 24 ժամյա/ հերթապահություն **«Մարաշ » 220 կՎ ենթակայան** ա/ արտադրատնտեսական շենքեր և շինություններ, թվով 1 մուտք բ/ ընդհանուր մակերեսը՝ 3,31132 /հա/ գ/ շենք -շինությունների ընդհանուր մակերեսը՝ 490,2 մ² Ծառայության տևողությունը՝ շուրջօրյա 1x 24 և 1 x 14 ժամ / ժամը 19:00-9:00/ հերթապահություն **Նախկին «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն» մասնաճյուղի տարածք** Հողամասի չափը՝ 3972 մ² Վարչական շենք՝ 418 մ² Պահեստներ՝ 675, 9 մ² Ծառայության տևողությունը՝ շուրջօրյա /1x 24 ժամ/:				Հաղթանակ ենթակայան հասցեն՝ ք. Երևան Ռաֆֆու 111/7 Մարաշ ենթակայան հասցեն՝ ք. Երևան Նոր նորք 9-րդ միկրոշրջան Ք. Երևան Բագրատուն յաց 6-րդ փակուղի	

Չափաբաժին 1 և Չափաբաժին 2

- Պատվիրատուի՝ «ԲԷՑ» ՓԲԸ օբյեկտները, տարածքներն իրենց մասնաշենքերով պետք է ունենան 24 ժամյա ծառայություն (շուրջօրյա ծառայություն, շաբաթվա բոլոր օրերին, ներառյալ՝ հանգստյան և տոնական օրերին): Կատարողը ծառայությունների մատուցման ընթացքում կազմակերպում է և ապահովում է օբյեկտի, տարածքների, ինչպես նաև պատվիրատուի կողմից Կատարողի պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պահպանությունը:

Գողության կամ այլ վտանգավոր արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված նյութական վնասի չափը որոշելու ժամանակ Կատարողը մասնակցում է ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը:

Կատարող Ընկերությունը՝

- նյութական պատասխանատվություն է կրում գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով պատվիրատուին պատճառված (հասցված) վնասի դեպքում, եթե վնասն

առաջացել է Կատարողի կողմից Պայմանագրի պայմանների խախտման կամ իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման պատճառով:

- պարտավոր է պատվիրատուի տարածքներում և մասնաշենքերում կատարել շրջայց, որը պետք է կատարվի պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված կարգով:
- պարտավոր է աշխատակիցներին ապահովել համապատասխան տարբերանշանով, պատվիրատուի կողմից տրամադրված օրինակին զեվով, ռճով, կարվածքով և կտորի տեսակով համապատասխանող և պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված համալիր արտահագուստներով (ամառային, ձմեռային, ներառյալ կոշիկը և ճտքավոր կոշիկ ըստ սեզոնի, ներառյալ գոտին)
- կարող է և պարտավոր է կրել օրենքով թույլատրվող հատուկ միջոցներ
- պարտավոր է ստացիոնար կապի միջոցներով կապ ապահովել պահպանվող տարածքների, շրջայց Կատարող աշխատակցի /խմբի/ ու օպերատիվ կառավարման կենտրոնի հետ /առկայության դեպքում/:
- պահպանության ենթակա բոլոր պահակակետերում ապահովել բուժօգնության դեղատուփերով:
- պարտավորվում է պատվիրատուի հետ համաձայնեցված սխեմայով տարածքում գտնվող բոլոր մասնաշենքերը, պահեստներն ու ավտոտնակները սարքավորել պահնորդի շարժման հետագիծը վերահսկող տեխնիկական միջոցներով (չիպերով)՝ տարածքում պահնորդների առկայությունը վերահսկողության տակ պահող տեղորոշման սարքավորումների՝ GPS TRACKERS – ների միջոցով, որոնք էլեկտրոնային բանալիների միջոցով և ծրագրային ապահովմամբ հսկում են պահնորդի հետագծի շարժը:
- պարտավոր է նաև պատվիրատուին տրամադրել այդ ծրագրային ապահովումը և էլեկտրոնային բանալիները, որոնք թույլ կտան պատվիրատուին նույնպես վերահսկել պահնորդի հետագիծը և շարժը
- պետք է պահնորդական կետերում ունենա ահազանգման GSM կապի միջոցով տագնապի ազդանշանի համակարգեր:
- պարտավոր է հերթափոխի ընթացքում իր կողմից պահպանվող տարածքում ապահովել շրջիկ խմբի առկայությունը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Ծառայության մատուցումը սկսելուց և դրա ընթացքում, վերոնշյալ տարածքներում պահպանություն իրականացնող բոլոր աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահնորդի բոլոր փաստաթղթերն ու վկայականները:
- Կատարողը պարտավոր է վերոնշյալ տարածքներում պահպանության իրականացումը սկսելուց ոչ ուշ քան 5 աշխատանքային օր առաջ պատվիրատուին ներկայացնել իր աշխատակիցների անվանական ցանկը և նրանց փաստաթղթերի բնօրինակները, որոնք սահմանված են օրենքով: Արդյունքում պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և Կատարողի կողմից կազմվում և ստորագրվում է համապատասխան ակտ, որը ներառում է աշխատակիցների անվանացուցակը:
- Կատարողը պարտավոր է վերոնշյալ տարածքներում պահպանությունը իրականացնող աշխատակիցների կազմում ցանկացած փոփոխության դեպքում, անկախ դրա անհրաժեշտության հիմնավորումից, խելամիտ ժամանակահատվածում, բայց ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել պատվիրատուին: Փոխարինող աշխատակցի նկատմամբ գործում են նույն պահանջները, ինչը սահմանված է սույն հայտով և ՀՀ օրենսդրությամբ:

- Կատարողը պարտավորվում է հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել աչքին տեսանելի գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):
- Կանխավճար չի նախատեսվում
- Վճարումը իրականացվելու է ամսական, հանձնման – ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Քինգ Մարշալ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ՀՀ, ք.Մասիս, Կենտրոնական
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	հրապարակ թիվ 15/5,15/3
Հ/Հ 1150001172630300	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ Մասիս մ/ճ
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 220163331493000
Գլխավոր տնօրեն	ՀՎՀՀ 00191157
	Տնօրեն
---------- Հ. Հարությունյան	---------- Դ.Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 3
«27» 12. 2021 թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-22/02» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» 12. 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀՇՁԲ-22/02» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն